ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ԽԸ-090-04.04.2019-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

No.	*Առաջարկության հեղինակը*	*Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը*	*Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)*	*Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը*	*Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը*
1.	ՀՀ կառավարություն	Առաջարկը վերաբերում է Նախագծին	*Առաջարկվում է փոփոխությունները կատարել ««Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի դեկտեմբերի 06-ի ՀՕ-236 օրենքում*	Ընդունվել է, կատարվել է փոփոխություն	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	Առաջարկը վերաբերում է Նախագծի 1-ին հոդվածին	*Առաջարկվում է ««Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի դեկտեմբերի 06-ի ՀՕ-236 օրենքի (այսուհետ՝ «Օրենք») 2-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.*	Ընդունվել է, կատարվել է փոփոխություն	Ընդունվել է

			«Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 17-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան տրված լիցենզիաները գործում են մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը: Նախկինում տրված լիցենզիաների գործողությունը դադարում է սույն հոդվածով սահմանված ժամկետի ավարտին հաջորդող օրվանից:»:		
3.	ՀՀ կառավարություն	Առաջարկը վերաբերում է Նախագծի 1-ին հոդվածին	*Առաջարկվում է Օրենքի 3-րդ հոդվածում «վեց» բառը փոխարինել «տասներկու» բառով:*	Ընդունվել է, կատարվել է փոփոխություն	Ընդունվել է
4.	ՀՀ կառավարություն	Առաջարկը վերաբերում է Նախագծի 1-ին հոդվածին	*Առաջարկվում է նույն հոդվածը լրացնել նոր նախադասությամբ.* *«Սույն օրենքի 2-րդ հոդվածում նշված լիցենզիաների համար մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը պետական տուրքի գծով լրացուցիչ պարտավորություն չի առաջանում:»:*	Ընդունվել է, կատարվել է լրացում	Ընդունվել է